

ԿՐՈՆԱԿԱՆ

ՄԵԾ ՊԱՀՔԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մեծ պարհք է, ապաշխարության օրեր։

Կրոնական հատուկ պաշտամունքների, աղաղողությունների, սուրբգրական խորիմաստ ընթերցումների խորհրդավոր, սրտագրավ և ուսանելի շրջանն է, երբ Եկեղեցին հրավիրում է հավատացյալներին ինքնամփոփման, հոգևոր խոկմունքների, ժուժկալության, աղոթքի և ապաշխարության։

Մեծ պահքը Քրիստոնեական Եկեղեցու հնագույն և կարևորագույն ծիսական կարգադրություններից մեկն է, որը ծանոթ է «Քառասնորդք», «Քառասնորդական պահք» *և* «Աղուհացք» *անուններով։*

«Կարգեցին առաքեալքն և եդին հաստատութեամբ եթէ զխ օր (քառասուն օր) պահս կարդասցեն յամենայն զօրութեամբ... և ապա տօն յարութեան Փրկչին» («Առաքելական կանոններ», հոդված 8)։

Հետագայում, Հայ Եկեղեցու լուսաբնակ հայրապետները, գեղեցիկ և շինիչ գաղափարն են ունեցել Հարության տոնը կանխող հիսնօրյա (Ավագ շաբաթն էլ հաշված) պահքի և ապաշխարության այդ օրերը համարել հավատացյալի հոգևոր պատրաստության, բարոյական արժանապատվության փորձաշրջան՝ որպես նախապատրաստություն տերունական փրկագործության խորհրդի։

«Այսօր մաքրեցարուք պահօք քառասնորեայ, զի ելցուք ի լեռն իմանալի առ Աստուած» *(շարական)։*

Քրիստոնեական մտածողության համար մարդը կազմված է հոգուց ու մարմնից՝ նյութից, և կյանքը՝ պայքար է հոգու և մարմնի, աստվածայինի և աշխարհայինի, երկնայինի և երկրավորի, մարդու իմացական բարձր իդեալների, ձգտումների, տեսիլների և երկրաքարշ կրքերի, ցանկությունների միջև։

Պահքը, Պողոս առաքյալի բացատրությամբ, այն շրջանն է, երբ հավատացյալին առիթ է տրվում սանձելու մարմինը, ասպարեզ տալու համար հոգու թռիչքին. «Զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ՝ արդարութիւն և խաղաղութիւն և խնդութիւն ի Հոգին Սուրբ» *(Հռովմ. ԺԴ 17)։*

Մարմինը դարձնել հոգու բարձրացման, ազնվացման, պայծառացման միջոց։ Մարդը կոչված է իր ետևից տանելու նյութը։ Նյութը ոչ թե թշնամին, այլ ծառան է հոգու, մտքի, կամքի։ Մարդն իր մտածումները, զգացումները արտահայտում է նյութ-մարմնով, ուրեմն պետք է մարմնական կարիքների վրա հաստատել հոգու տիրապետությունը, իրավունքները, *որովհետև «ոգի առաւել է քան զկերակուր» (Մատթ. Զ 25) և «Մի՛ վասն կերակրոյ քակեր զգործն Աստուծոյ» (Հռովմ. ԺԴ 20)։* Այսօր ինչքան էլ պահքի հին, խիստ, կարգապահական, նյութական հասկացողությունը կորցրել է իր երբեմնի նշանակությունը, *«Որ ուտէն, զայն որ ոչն ուտէ, մի՛ անդոսնեսցէ» (նույն տեղում),* այնուամենայնիվ, պահքի նշանակությունը պահում է հավատացյալի կյանքում իր արժեքը, կրոնաբարոյական, դաստիարակիչ իր դերը, որպես հոգեկան կարգապանության, հավասարակշռության սկզբունք և առիթ՝ մարդու ոգեկան ազնվացման, մարդկային առաքի-

նությունների արմատավորման և կատարելագործման ճանապարհի վրա։

Արդարև, պահքը անօգուտ է, եթե «պահեցողը»-ը զուրկ է հոգեկան, բարոյական, մարդկային առաքինություններից։ «Զմիս անասնոց ոչ ուտեն, և զեղբօրն անյագաբար ուտեն։ Գինի ոչ ըմպեն և զհոգին արբեմբ շաղախեն։ Զամուսնացեալսն ատեն, և պիղծ խորհրդով հանապազ պոռնկին» (Եզնիկ)։

Մեծ պահքի և առհասարակ ապաշխարության օրերի մեր եկեղեցական արարողությունները, ժամերգությունները, շարականներն ու սուրբգրական ընթերցումները շատ գեղեցիկ են, խորհրդավոր, շինիչ և ստեղծում են հավատացյալի համար այն քաղցր, սրտագրավ մթնոլորտը, երբ մարդ, ինքնաբերաբար նույնիսկ, մղվում է մտամփոփման, իրական խոկմունքների, ապրելու մի պահ իր սեփական ներաշխարհով, ինքն իրեն դեմ հանդիման, որպես մեղադրող և մեղադրյալ, իր խղճի և իր Աստուծո առաջ։

Մեր շարակնոցը հարուստ է ապաշխարության նվիրված շարականներով, որոնք հայ հոգևոր քնարերգության անկրկնելի գանձերից են։ Ապաշխարության շարականների կանոնը վերագրվում է Ս. Մեսրոպ Մաշտոցին։ Գեղեցիկ, պատկերավոր, անմիջական, պարզ ու վսեմ են այդ շարականները, սաղմոսների, մեր հին «լալեաց երգ»-երի ոգով և շնչով գրված, որոնցում մարմնի բանտում և մեղքի ճիրաններում տվայտող հոգին, «բղխմամբ արտասուաց և հառաչանօք սրտի», ձգտում է մաքրազարդվել, ախտահանվել, ձերբազատվել իրեն կաշկանդող կապերից և վերադառնալ սկզբնական մաքրության, սրբության, լույսին և կյանքին, որ է Աստված։

Ապաշխարության շարականների գլխավոր թեման մեղավոր մարդն է և նրա իղձը՝ մեղքից ձերբազատվելու։ Ըստ շարականների, կյանքը վշտի, արցունքի հովիտ է, իսկ մեղավորը՝ հավիտենական ուղևորը՝ անպաշտպան, անօգնական, մարմնով ծեծված, հոգով հիվանդ՝ կյանքի ալեկոծ ծովու վրա, որպես տաշեղ, բայց շրթների վրա սրտագին աղոթք՝ փրկվելու։ Որքա՜ն իրական, ճիշտ և ամբողջական է հետևյալ պատկերը, կյանքի փիլիսոփայությամբ գծված.

«Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ,
Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ.
Նաւապետ բարի, լեր անձին իմոյ
ապաւէն»։

Մեղքի, ապականության, չարիքի դիմաց մեղավորի սիրտը «զարհուրի ի յանցանաց», նա զգում է իր մեղավորությունը և աղերսում ջերմորեն.

«Քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինքք մեղաց.
Դարձո զցասումըն քո ի մէնջ...
Բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնս...
Պարգևեա ապաշխարութեամբ լուանալ
զմեղս»։

Ապաշխարության, զղջման հաջորդում է աղոթքը.

«Յամենայն ժամ աղաչանք իմ այս են՝
Ի մեղաց իմոց սուրբ արա զիս, Տէ՛ր»։

Ապաշխարության շարականները մեղավոր հոգու ճիչ են. «ի խորոց սրտից» բխած խոսք, անկեղծ, ջերմ, անմիջական, մարդկային, որոնցում խտացել է մեղավոր մարդու ողբերգությունը և փրկության իղձը։

Արդարև, այս շարականների պարզությունը, ոսկեդարյան լեզուն, «անարվեստ արվեստը» պայծառ վկայությունն է նրանց վաղեմության, հնության։ Նրանց մեջ չկան Ծննդյան, Աստվածածնի, Խաչի, Եկեղեցու, Ս. Հոգու նվիրված շարականներին հատուկ դավանաբանական, մեկնողական, ճառախոսական տարրեր։ Ապաշխարության շարականները երգվում են մեր Եկեղեցում պահքի օրերին, շաբաթապահքերի ժամանակ և Մեծ պահքի շրջանում։

Մեծ պահոց կամ Աղուհացից կիրակիների շարականների ամբողջ կանոնը Ս. Ներսես Շնորհալու հոգեկիր և ոգեշունչ գրչին են պատկանում։ Այդ շարականները ևս իրենց բովանդակությամբ, ոճով, արվեստով շատ պարզ են, գեղեցիկ, իմաստալից, ուսանելի, նման ապաշխարության շարականներին, և որոնք իրենց խորհրդով հավատացյալի մտածման առաջ, Մեծ պահքի օրերին, բացում են արարչագործության, մարդու ստեղծման, դրախտում երանական կյանքի, մարդու անկման և հուսկ ուրեմն փրկագործության՝ այսինքն Քրիստոսի մարդեղության, չարչարանքների և հարության խորհուրդը, այլ խոսքով՝ մարդկային հոգու փրկագործության դրաման։

Մեծ պահոց կիրակիներին նվիրված այս խորհուրդը հատուկ է միայն Հայ Եկեղեցուն։

Մեծ պահոց առաջին կիրակին կոչվում է Բուն բարեկենդան, զուտ հայկական մի տոն, որպես «լավ ապրելու, առատ ուտելու, կերուխումի, ուրախության, զվարճության», ազգային օր, հավանաբար նախաքրիստոնեական շրջանից, ինչպես ցույց է տալիս ժողովրդական երգը՝

«Բարեկենդանի օրեր է,
Խելքըս գլխես կորել է»։

Քրիստոնյա մյուս ժողովուրդները մեր Բարեկենդանի փոխարեն ունեն իրենց աղ-

գային ուրախության օրը, «կառնավալ»-ի տոնը։

Բայց Բարեկենդանը միայն սովորական ուրախության, կերուխումի օր չէ. դա ունի կրոնաբարոյական խոր նշանակություն։

Ըստ Շնորհալու, Բարեկենդանը նվիրվել է Արարչագործության, մեր նախահայր Ադամի ստեղծման, նրա աստվածային ծագման և դրախտում անցկացրած երբեմնի երջանիկ, երանական կյանքի հիշատակին։

Արարչագործությունը ավարտվում է վեց օրում։ Ստեղծագործության յուրաքանչյուր «օր»-ը նշանակում է մի հավիտենականություն, մի դարաշրջան։ «Հազար ամ յաչս Տեառն որպէս օր երեկի, զի անց» (Սաղմ. ՁԹ 4)։ Աստված ժամանակի ընթացքում «քաոս»-ից հրաշակերտում է «կողմոս»-ը, տիեզերքը։

Ստեղծագործությունը կատարվում է նաև աստիճանաբար, պարզից դեպի բարդը, ստորինից բարձրագույնը, անգործարանավորից գործարանավորը, այնուհետև կենդանականը, բանականը և հոգեկանը։

Արարչագործությունից հետո «Աստված ետես զի բարի է»։ Բայց դեռ չէր ամբողջացել ստեղծագործությունը։ Պակասում էր մարդը։

Եվ ահա «ի վեցերորդ առաւօտին» Աստված ստեղծում է «զմարդն և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի (Ծննդ. Բ 7), «հող յերկրէ», բայց «ի պատկեր իւր»։ Աստված հոգի է, մարդն էլ իր էությամբ, բնությամբ ոգեկան, հոգեկան էակ է։

«Զպատկեր իւրական խառնեալ ընդ հողանիւթ բնութեան»,— գրում է Շնորհալին Բարեկենդանի կիրակին նվիրված իր «Բանն որ ընդ Հօր էութեան» շարականում։

Աստված մարդուն օժտում է նաև ազատ կամքով և անձնիշխանությամբ, որովհետև արարչագործության մեջ կարևոր տեղ է գրավում մարդը որպես ստեղծագործության լրումը, թագն ու պսակը, գլուխ-գործոցը, որպես միություն հոգու և նյութի։ Մարդու մեջ նյութը հասնում է իր բարձրագույն ձևին և կատարելության՝ կենդանանալով, «ոգեկանանալով» և «փառավորվելով», «ոգեղեն»-ը խտանում, թանձրանում է մարդու մեջ, որով մարդը դառնում է, ըստ Շնորհալու, շփման կենտրոնը երկու աշխարհների, և որպես այդպիսին ապրում երկու աշխարհների մեջ, երկու աշխարհների համար։

Մարդը իր ոգեկան և նյութական բնությամբ «արարած»-ների մեջ ամենասիրելին է Աստուծու։ Ամեն ինչ ստեղծվել է միայն մարդու համար. «Եւ օրհնեաց Աստուած զնոսա (Ադամին և Եվային) և ասէ. «Աճեցէք, լցէք զերկիր և տիրեցէք գմա» (Ծննդ. Ա 28)։ Աստուծո հոգածության, սիրո միակ առարկան մարդն էր, որովհետև նա ստեղծվել է աստվածային ընկերակցության համար։

Դրախտում մեր նախահայրը, ըստ Շնորհալու, «ցնծայր զուարճացեալ, անտխրական խնդութեամբ, քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին, յորմէ զլուսոյն ճառագայթ տպաւորէր ի յինքեան» (շարական Բարեկենդանի)։

Ադամ, սակայն, երկար ժամանակ չի կարողանում մնալ աստվածային ընկերության մեջ, «սկզբնական արդարության» վիճակում։ Նա չի պահում պատվերը և ընկնում է ու մեղանչում։ Շնորհալին գեղեցկորեն նշում է, որ «պահք»-ի օրենքը, ըմբռնումը կար նաև Ադամի օրով, դրախտում, երբ Աստված արգելեց ուտել «բարու և չարի գիտության ծառ»-ից, «քանզի ի դրախտին որ սկզբանն օրէնսդիր պահոցն»։ Ի՞նչ է մեղքը։ Մեղք նշանակում է հանցանք, վնաս, պատվերի կամ օրենքի դեմ կատարված գործ, ակտ և կամ ճշմարտության ուրացում։ Իսկ կրոնական իմաստով մեղք են կոչվում այն գործերը, որոնք հակառակ են Աստուծո կամքին, աստվածադիր պատգամների և պատվիրանների։ Մեղքի անխուսափելի հետևանքը պատիժն է. «զի թոշակն մեղաց մահ է, այլ շնորհքն Աստուծոյ կեանք յաւիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռովմ. Զ 23)։

Ադամ մեղանչում է, եղծում իր մեջ աստվածային պատկերը, գերի է դառնում նյութին։ Մինչդեռ նրա Աստուծո պատկերով ստեղծված լինելը հստակորեն թելադրում էր մարմնի ենթարկումը՝ նրա կատարելագործված, բարոյական ոգեկան բնության։

Ինչո՞ւ է մեղանչում Ադամ։

Ադամ մեղանչում է որպես բանական, ինքնագիտակից, ազատ և ինքնիշխան էակ։ Կամքն է գործում ոճիրը, հանցանքը։ Ադամի մեղանչումը «անխուսափելի» չէր։ Նա կարող էր չմեղանչել։ Ադամ «ճակատագրված» կամ «դատապարտված» չէր մեղք գործելու։ Հետևաբար գործված մեղքը կամավոր էր։ Նրան ստիպող, բռնադատող չկար։ Ադամ կամավորապես փորձի ենթարկվեց և «պակաս գտաւ» և «ի միոջէ մարդէ մեղք աշխարհ մտին» (Հռովմ. Ե 12)։

Ադամ, որպես փոքր տիեզերք, իր մեղքով խանգարեց արարչագործության առաջընթացը, լրումը, դեմ գործեց Աստուծո կամքին, ընկավ դատապարտության տակ և արտաքսվեց դրախտից։

Մեծ պահքի երկրորդ կիրակին նվիրված է Ադամի դրախտից արտաքսման հիշատակին

և կոչվում է մեր եկեղեցական օրացույցում Արտաքսման կիրակի:

Շնորհալին, «Կանոն երկրորդ կիրակէին Աղուհացից» շարականի մեջ գրում է.

«Որ զօրէնս սրբութեան պահոց նախ
ի դրախտին աւանդեցեր,
Զոր ոչ պահելով նախաստեղծիցն,
ճաշակմամբ պտղոյն,
Ճաշակեցին զդառնութիւն մեղաց և
մահուս»:

Ուրեմն, ըստ Շնորհալու, նախահոր հանցանքը անհնազանդությունն էր: «Անհնազանդությամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն» (Հռովմ. Ջ 19):

Ադամ փորձի ենթարկվեց, որովհետև ուրիշ կերպ կարելի չէր հաստատել և ստուգել նրա ազատ, կամավոր, գիտակից հնազանդությունը Աստուծո նկատմամբ: Աստվածադիր «պահք»-ի օրենքը ապահովում էր նախահոր ազատությունը, որովհետև նա արդար էր և «արդարոց ոչ գոն օրէնք»: Օրենքը կատարել, օրենքին հպատակվել, հնազանդվել երբեք չեն նշանակում ազատության բռնաբարում. «Իսկ ով որ յառեալ ի կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի և ի նմին կացցէ» (Յակոբ. Ա 23): Ազատություն չի նշանակում սանձարձակություն, անիշխանություն, կամակորություն և անպատասխանատվություն: Ադամ իր արարքի համար պատասխանատու էր նախ իր անձի, որպես բանական էակի, և ապա Աստուծո առաջ: Օրենքը պահելով և փորձության դիմադրելով էր, որ Ադամ պիտի հաստատեր իր համակերպումը, հնազանդությունը Աստուծո կամքին, որը բարի էր, համակ սեր և անսպառ զթություն: «Ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է» (Բ Կորնթ. Գ 17):

Մեղանչումին անմիջապես հաջորդեց պատիժը. «յորում աւուր ուտիցէք ի նմանէ, մահու մեռանիցիք»: Այստեղ «մահ» հասկացողությունը նյութական իմաստ չունի, նշանակում է ենթակա լինել մահվան, նյութի բնության օրենքին, կորցնել «սկզբնական արդարությունը», մատնվել ֆիզիկապես քայքայման, ապականության: Մեղանչելով, Ադամ անդարմանելի վերքեր ստացավ, ապականվեց, ասում է Շնորհալին, «զանազան վիրօք» և ընկավ «ի բազմապատիկ հիւանդութիւնս»: Ադամ գերի դարձավ իր ցանկությանը և մարդու բնական բնազդները տեր դարձան նրա կամքին: Մարդու «բնությունը»-ը չփոխվեց, այսինքն Ադամ մարդ լինելուց չդադարեց, բայց զրկվեց աստվածային ընկերակցությունից, ներկայությունից, օտարացավ Աստուծուց, մերկացավ «անմահութեան պատմուճանն զառաջին, զոր զգեցեալ էր օծմամբ Հոգւոյն» և ենթարկվեց մեղքի ստրկությանը, «մարդկային տկարության»-ը, այսինքն մեղքից չկարենալ խուսափելու հոգեկան վիճակի մեջ ընկավ. «Մեղք մարդոյ հաստատեալ են ի խնամս չարին, ի մանկութենէ իւրմէ» (Ննդ. Ը 21):

Մարդու հոգեկան կործանումը անկանխելի էր:

Բայց, եթե Աստուծո արդարությունը պահանջում էր մեղավորի պատիժը, ապա նրա սերը «ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալն նորա և զկեալն»:

Մեղավոր մարդու նկատմամբ աստվածային սիրուց, զթությունից ծնվում են տերունական փրկագործության անհրաժեշտությունն ու խորհուրդը:

Մեծ պահոց երրորդ կիրակին նվիրված է Անառակին: Բոլորը գիտեն այդ սքանչելի առակը, նրա շինիչ, զգաստացնող իմաստը. Ավետարան՝ Ավետարանի մեջ, այնքան տիպական, մարդկային է առակը իր ամբողջության մեջ, որպես իրական կյանքից պոկված մի էջ, մարդու ողբերգության, թշվառության, անկման մասին: Կյանքում շատ կան նման անառակներ, ամեն տեղ, բոլոր ժամանակներում:

Բայց խորքում, կրոնական իմաստով, Անառակի պատմությունը (Ղուկ. ԺԵ 11—32), ավելին է, քան սովորական առակը: Անառակ որդին մեղավոր մարդկության խորհրդանիշն է, նրա մանրանկարը: Անառակը իր և բոլոր ժամանակների Ադամն է, «սկզբնական մեղքը» «գործնական մեղք»-ի փոխակերպած: Աստվածային ներկայությունից արտաքսված, ոգեկան, իմացական իր շնորհներն ու դանձերը հոմպեստս վատնած, կրքերին գերի դարձած, հոգեկան, բարոյական անկման վերջին հանգրվանին հասած Ադամ-անառակի կերպարն է նա: Արդարև, առաջին մեղքը ճաշակելուց հետո, մարդու մեջ ժառանգական, ունակական վիճակ դարձան մեղանչելու ղդացումը, փորձությունը, գիտակցությունը:

Ողբալի, անկանգնելի, հուսահատական կյանքներ մարդու հոգեկան կործանումը, եթե չլիներ փրկության հույսը:

Մարդը, սակայն, չկիտի կարողանար վերստին տիրանալ «անճառ բարի»-ին, որի համար ստեղծվել էր, եթե աստվածային նախախնամությունը, սերը չհոգար մարդու ճակատագրի մասին:

Մեղանչումից հետո մարդը բոլորովին չքվեց: Հին Կտակարանը հանդիսացավ փրկագործության նախապատրաստությունը և հավիտյաններ անցան, որպեսզի մարդը հոգեպես, բարոյապես պատրաստվի ընդու-

նելու փրկության Ավետարանը։ Անառակը անկման վերջին հանգրվանին էր հասել և չուներ միջոցը իր սեփական ուժերով փրկվելու։ Բանն Աստված իր վրա առավ սիրահոժար մարդկությունը փրկելու ազնիվ գործը, նյութի՝ մարդկային մարմնի միջոցով մարդուն հասնելու համար, ենթարկվելով մարդկային բնության անհրաժեշտ սահմանափակումներին, տկարություններին, «բաց ի մեղաց» և «պատարագ վասն մեր ղենաւ», ցույց տալով հավիտենական կյանքի ճշմարիտ ուղին։ «Նորա վիրօքն բժշկեցաք»։ Այսինքն, Քրիստոս Իր վրա առավ սիրով այն տառապանքները, որոնց մեղավորը պետք է ենթարկվեր՝ քավելու համար իր մեղքերը։

Ըստ Շնորհալու գեղեցիկ բացատրության («Կանոն երրորդ կիրակէից Աղուհացիցս «Օրհնեմք զքեզ անսկիզբն Հայր» շարականը)՝ Հիսուս մարմին առավ մարդուն նորից Աստուծո որդեդրության փառքին բարձրացնելու, վերականգնելու համար մարդուն մեջ եղծված աստվածային դրոշմը, տիրական պատկերը։

Ինչպես ստեղծագործության, այնպես էլ փրկագործության մղիչ շարժառիթը Աստուծո բարությունն է, սերը, գութը *(Հովհ. Գ 16)։*

Բայց Աստված մարդուն չի կարող փրկել հակառակ նրա կամքին և համագործակցության։ Մենք Աստուծո որդիներ կդառնանք մեր իսկ կամքով։ Շատ հատկանշական է Անառակի առակի մեջ «եկեալ ի միտս իւր» բացատրությունը։ Մեղավորը պիտի խորասուզվի իր հոգու ալքերի մեջ, պիտի ճանաչի իր պատասխանատվությունը գործած մեղքի մեջ, խոստովանի համարձակ կերպով, որ իր մեջ դեռևս ունի աստվածայինը, և անկման վերջին հանգրվանի վրա էլ տա փաստը իր հոգեկան ծագման, ունենալով միշտ կարոտը իր կորցրած երանական վիճակի։ Փրկության հավատը մեղավորին ոտքի է կանգնեցնում, հույսը նրան սպառաղինում է, իսկ միայն սերը փրկություն է բերում, Աստուծով և Աստուծո հետ ապրելու համար, գառնալով աստվածանման։ Մարդու բարոյական մեծության պայծառ զգացումը փրկության իղձն է։ *Մարդը, որպես նկարագիր, պատկեր Աստուծո, ապրում է այնքան, որքան իր հոգում կենդանի է այդ իղձը։ Արդարև, գեղեցիկ և ճշմարիտ է ասված, որ մարդը միշտ երկինքը երազող ընկած հրեշտակ է, որը կարող է միշտ մտածել իր բոլոր մեղավոր թարթափումների մեջ Աստուծո բարության մասին, եթե իր հոգում հավետ չի շիջել կայծը աստվածայինի, իղձը և հույսը փրկության։ Մարդը հոգեպես էլ մահանում է, երբ նրա սրտում ցամաքում է փրկության իղձը, հույսը։ Ով անընդունակ է հավատալու, հուսալու, նա արդեն բարոյական դիակ է։ Հավատը չի պտղաբերում քարացած սրտերում։*

«Հայր, մեղայ յերկինս և առաջի քո»։ Ինքնաճանաչման պայծառ առավոտն է այս, հոգու վերազարթոնքի պահը։ Որքան հուսադրիչ է մեղավորի համար մտածել, որ ինքը կորստյան մատնված չէ, լքված, մոռացված չէ։ Մարդը հոգեկան, իմացական անգին արժեք է, կարելիություն՝ Աստուծո համար։

Քրիստոնյայի համար մեծագույն մեղքը հուսահատությունն է, *այսինքն մեղքի, չարիքի դեմ կռվել չցանկանալու վիճակը։* Անառակ, *բայց որդի։ Ավետարանի Անառակը ձգտում է փրկության, արդարանալ և ձեռք բերել կորցրած «երանությունն»-ը։ Նրան մնում է ընկած դրությունից դուրս գալու համար զղջալ, ապաշխարել, հույսը դնել Աստուծո բարության, գթության վրա. «Դարձի՛ր, Տէր, դարձի՛ր քաղցրութեամբ ի խնամս գթութեան ձրի և ամենաառատ պարգևօք սիրոյ՝ մխիթարել յաւէտ զտրտմեալքս» (Նարեկացի)։*

Անառակը մեղքի դեմ հաղթանակ տարած, մեղքը պարտության մատնած և իր նախկին աստվածային, մարդկային բնության իրավունքների մեջ վերահաստատված մարդու կերպարն է։

Մեծ պահքի չորրորդ կիրակին կոչվում է Տնտեսի կիրակի։

Տնտեսի առակը (Ղուկ. ԺԶ 1—13) առաջին հայացքից կարծես չի կապվում Մեծ պահքի նախորդ կիրակիների խորհրդի, կրոնական մթնոլորտի, պահքի և ապաշխարության գաղափարների հետ։ Առակը հետևյալն է։ Մեծահարուստ, կալվածատեր մի մարդ ընդարձակ հողեր, կալվածներ ունի, որոնց վրա «տնտես», վերակացու կամ գործերի կառավարիչ է նշանակել մի մարդու, որն աշխատանքի մեջ իրեն չի արդարացնում։ Կալվածատերը որոշում է նրան աշխատանքից հեռացնել, կանչում և ասում է. «Այսուհետև չես կարող լինել անտես, ներկայացրու հաշիվը և հեռացիր»։ Տնտեսը, իր ընտանիքի ապագա նյութական կյանքը ապահովելու և իր պատիվը փրկելու համար, խարեբայությունների է գիմում, կալվածատիրոջ հաշվին առևտրական զիջումներ է կատարում պարտապաններին և իր տնտեսական ապագան ապահովում։ Այդ մասին լսում է կալվածատերը և գովում տնտեսի ճարպիկությունը, «իմաստությունն»-ը։ Տնտեսը իր ապագան կերտում է ոչ թե «ուրիշների կործանումով,

այլ կանգնումով։ Հարստությունը նրա համար միջոց է և ո՛չ նպատակ»։

Ինչպես երևում է, Ավետարանի ամենախրթին և «ներքին դժվարություններով լեցուն հատված մըն է» (Օրմանյան) Տնտեսի առակը։

Շնորհալին սակայն խորիմաստ կերպով բացատրում է առակի նշանակությունը «Կանոն չորրորդ կիւրակէի Աղուհացից» շարականի կանոնում, այն կապելով նորից Մեծ պահքի նախորդ կիրակիների խորհրդի և փրկագործության գաղափարի հետ։

Ադամ դրախտում մեղանչելուց առաջ, արարչագործության «տնտես» էր կարգվել, «անմահ տնկոցն երկրագործ», որի պարտականությունն էր «գործել և պահել», զարգացնել արարչագործությունը. «Եւ ի դրախտն որ յԱդենի, տնտես եդեալ զմարդն առաջին»։

Ադամի մեղանչումով հետաձգվեց նաև համագույքի, տիեզերքի ներդաշնակ կատարելագործումը։ Մինչ Մարդեղության խորհրդի իրականացումը «ամենայն արարածք հեծեն և երկնեն» (Հռովմ. Ը 22—խոսքը նյութական տիեզերքի մասին է)։

Ըստ Շնորհալու, այս աշխարհի վրա մարդը նույնպես տնտես է։ Կյանքը և իր բոլոր բարիքները աստվածային սեփականություններ են, հանձնված մարդու տնտեսության, խնամքին և հոգատարության։ Դրանք լավ հավասարակշռությամբ, իմաստությամբ պետք է գործածի մարդ ի նպաստ իր հոգեկան, բարոյական աճման և կատարելագործության։ Եթե, սովորեցնում է Ավետարանը, «որդիք աշխարհիս» իմաստուն են, խելոք, իրենց գործը իմացող և ամեն ինչ անում են իրենց նյութական շահը ապահովելու համար, որքա՜ն ավելի իմաստություն, արթնամտություն, կամք և վճռականություն պետք է ունենան «որդիք լուսոյ»՝ այսինքն հավատացյալները, ապահովելու համար իրենց հոգեկան օգուտը։ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան» (Ղուկ. ԺԶ 9)։ Նյութի վրա հոգու տիրապետությունն։ Այս է Ավետարանի տնտեսական բարոյականի ոգին։ Նյութականը, փողը, հարստությունը միջոց են և ոչ երբեք նպատակ։ Մարդը պետք է այն օգտագործի իր հոգեկան կարիքների համար միայն։ «Զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ աշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցի» (Մարկ. Ը 36)։

Այնուհետև այս աշխարհի վրա Քրիստոսի արյամբ փրկված հավատացյալը, մաքուր կյանքով ապրելու համար, փորձության, մեղքի մեջ չընկնելու համար, միշտ կարիքն ունի Աստուծո լույսին, խորհրդին և առաջնորդության։ Հավատացյալը չի կարող հեշտությամբ հասնել աստվածային իր նպատակին, եթե չլինի Աստուծո օգնականությունը, որովհետև նա, կազմված լինելով հոգուց և մարմին նյութից, խաղալիք է երկու հակամարտ, ներհակ ուժերի ձեռքում։ Եթե Աստված ձգտում է մարդուն բարձրացնել իրեն, դեպի բարության, կատարելության, սրբության գագաթը, մինչ մեղքը, աշխարհը, ձգում են նրան դեպի վար։ Գրավիչ, փորձիչ են աշխարհի հրապույրները և մարդը թույլ և տկար։ «Աշխարհ պարտողական գինի է» (Նարեկացի), իսկ, «ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ»։

Արդարև, իրական, մեծագույն դժբախտությունն այն է, որ մարդը չի կարողանում կտրվել աշխարհից. «յԵդիպտոս միշտ ունիս զսրտիդ դարձ» (Նարեկացի)։

Մարդը կարող է փորձության դիմանալ միայն Աստուծո հետ ամենօրյա հարաբերությամբ, տևական հաղորդակցության միջոցով, որը կատարվում է աղոթքի շնորհիվ։ «Նորոգելով քեզ տաճարացուցեր» (Շնորհալի)։

Մեծ պահոց հինգերորդ կիրակին Անիրավ դատավորի առակով (Ղուկ. ԺԸ 1—18), աղոթքի կարևորությունը և խորհուրդն է մատնանշվում հավատացյալի կյանքի մեջ։

Շնորհալին շարականի իր կանոնի մեջ գրում է. «Շնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման մաքուր աղօթիւք»։ Աղոթելը արվեստ է, և ամեն մարդ չէ որ կարող է աղոթել։ Քրիստոս ևս Իր փորձության, դժվարության պահերին, աղոթքով է, որ զոտեպնդվում, հզորանում էր։

Դատավորի առակը բոլորս գիտենք։ Մարդը իր սեփական ուժերով չի կարող հաղթահարել չարիքը։ Հավատացյալը Քրիստոսի մեջ ապրելով մեկտեղ, ապրում է մարմնով, բայց պետք չէ որ երբեք նա ենթակա լինի մարմնական բնազդներին. «Ոչ ըստ մարմնոյ գնայցեն» (Հռովմ. Է 25)։ Ուրեմն, մարդը միշտ կարիքն ունի Աստուծո լույսին, Աստուծո ներկայությանը իր կյանքի, իր գործերի, իր խոհերի մեջ։ Եվ Աստված մարդու հոգու մեջ միշտ ներկա, զգալի և շոշափելի կդառնա միայն աղոթքի միջոցով, կենդանի, տևական և անձնական հաղորդակցությամբ։

Շնորհալին գեղեցկորեն նշում է, որ մարդու մեջ Աստուծո ներկայությունը, արդար դատավորը, մարդու միտքն է. «Դատաւոր արդարութեան հաստատեցեր ի մեզ զմիտս մեր, դատել զհոգի և զմարմին, արդարապէս դատմամբ»։ Ըստ Շնորհալու, միտքը մարդու մեջ Աստուծո ներկայությունն է, բանականության ձայնը, բարու զգացումը։ Շնորհա-

լին խնդրում է Աստուծուն, որ «դատավոր միտքը», աստվածային օրենքների համաձայն, միշտ արդար դատաստան անի «ընդ ոսոխի մարմնոյ իմոյ», որպեսզի Աստված հաշտվի «ընդ այրի եղեալ հոգիս», և բացվեն «իմանալի աչք սրտից մերոց»։

Եթե Անիրավ դատավորը «ոչ ունելով զերկիւղ սուրբ և անպատկառ ի մարդկանէ, ոչ առնէ դատ զրկելոյն», բայց ի վերջո լսում է այրու խնդրանքը, որքա՜ն արդար դատավոր է Աստված, Հայր բարեգութ, որ միշտ լսում է մեղավորի ձայնը և չի կամենում նրա մահը։

Քրիստոսի արյունով փրկված մեղավորը, ուրեմն, աղոթքով ևս մաքրազարդված, վերագտնում է իր հոգու խաղաղությունը, իր աստվածային երանությունը և, աղոթքով զորացած, արթուն պատվիրանապահությամբ և հոգևոր կյանքի զգաստ արթնությամբ, սպասում է Փրկչի գալստյան։

Աղուհացից վեցերորդ կիրակին նվիրված է Փրկչի գալստյան խորհրդին, առաջինը՝ Ծաղկազարդի օրը Երուսաղեմ, իսկ երկրորդը՝ աշխարհի վերջում, «յաւուրն յետնում», երբ հավատացյալի առաջ հնարավորություն է բացվում, միանալու համար աստվածության հետ, որ ամենայն կատարելության լուսատիպն է։ Շնորհալին, իր շարականի կանոնի մեջ, երգում է. «Մաքրեա գթութեամբ և յոգեա ի Քեզ միութեամբ»։

Քրիստոսի գալուստով իր վերջնակետին է մոտենում փրկագործության խորհուրդը։

«Այսօր զուարճացան տիեզերք գալըստեամբ Աստուածորդւոյն յԵրուսաղէմ»։

Փրկիչը հաղթական մուտք է գործում Երուսաղեմ՝ «վասն մերոյ փրկութեան»։

«Իսկ նոր Ադամդ ի վեց գարուն, այց արարեր կորուսելոյն»։

Քրիստոս իր կյանքի խաչի վրա պատարագումով տալիս է մարդու փոխարեն Աստուծո արդարության որպես հատուցում, որպես մարդու պարտքը և փրկագինը. «Շիցոյց զրոց մեղացն և մեռեալքս դարձուցեր ի կեանս»։

Մեղավոր մարդը, Քրիստոսով փրկված, աշխարհի փորձությանց հաղթած, պահքով, ապաշխարությամբ և աղոթքով զորացած, հավատով, հուսով և սիրով հրճվալից, իմաստուն կույսի նման, հոգին վառած որպես ճրագ, սպասում է Փրկչի հարության փառքին, որը պսակն է փրկագործության խորհրդի։

Մեր եկեղեցին, ամեն տարի, այսպիսի խոհերով, սուրբ մտածումներով անցկացնում է Մեծ պահոց այս յոթնյակը, հրավիրելով յուրաքանչյուր հավատացյալի՝ անդրադառնալու իր աստվածային ծագման, մարդկային բնության վեհության և պատասխանատվության, ապրելու համար մաքուր կյանքով, Աստուծո մեջ և Աստուծո համար։

Որպես եկեղեցի և ժողովուրդ, որքա՜ն կարիքն ունենք Մեծ պահոց այս խորհուրդներին, իրագործելու համար մեր հոգեկան, բարոյական, ինչո՞ւ չէ՝ նաև ազգային և հայրենասիրական կատարելության իղձերը։

Պահե՛նք և մեր կյանքում իրագործենք պահքի խորհուրդը, որպեսզի իրավունք ունենանք ողջունելու Հարության արշալույսը և երգելու.

«Փա՜ռք հրաշափառ յարութեան քո, Տէ՛ր»։

Ա. Հ.